Doi: 10.56737/2953-7843-2023.08-152

ԼՈՒՍԻՆԵ ՎԱՐԴԱՆՅԱՆ
Բանասիրական գիտ. թեկնածու, ԳԱԱ ԳԻ

ԱՆԻԻ ՊԱՏԿԵՐՆ ԱՐԻՍՏԱԿԵՍ ԼԱՍՏԻՎԵՐՑՈՒ «ՊԱՏՄՈՒԹԵԱՆ» ՄԵՋ ԵՒ ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼՈՒ «ՈՂԲ ԵԴԵՍԻՈՅ» ԵՐԿՈՒՄ[1]

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Բագրատունյաց Հայաստանի մայրաքաղաք Անիի նշանակությունը բացառիկ մեծ է ոչ միայն իբրեւ համաշխարհային հռչակ վայելող միջնադարյան նշանավոր կենտրոն, այլեւ որպես հայ ժողովրդի անհասկանալի կորուստների խորհրդանիշ: Անիի կործանման ցավագին վերարծարծումն ու կորստի պատճառահետեւանքային որոնումները շարունակվում են հայ նոր եւ նորագույն շրջանների գիտական եւ գեղարվեստական վերլուծություններում: Անին յուրահատուկ ընկալում ուներ ժամանակակիցների համար. բազում բնորոշումներից հիշենք «աստվածաբնակ» մակդիրը, որով հայ մատենագիրներն ու գրիչները բնութագրում էին միայն խոշոր վանքերն ու նշանավոր սրբավայրերը, իսկ քաղաքներից՝ միայն Երուսաղեմը[2]: Անիի հանձնումը բյուզանդացիներին (1045 թ.), իսկ հետո գրավումը Թուրք Ալփ-Արսլանի կողմից (1064 թ.) քաղաքի սոսկ անկում չէր, ինչպես կարող է համարվել Կարս, Ուռհա, Մելիտենե քաղաքների առումը, այլ պետականության կորստի ազդարար, որը բազում ծանր հետեւանքներ էր գուժում ոչ միայն Հայոց աշխարհին, այլ նաեւ կանխագուշակում էր Բյուզանդական կայսրությանն սպասվող աղետները[3]: Այս ամենը ԺԱ. դարի պատմիչ Արիստակես Լաստիվերցին «Պատմութիւն» երկում վավերագրել է իբրեւ ականատես եւ վկա: Մեկ հարյուրամյակ անց Ներսես Շնորհալին գրում է «Ողբ Եդեսիոյ» չափածո երկը, որտեղ պատկերում է հայաշատ Եդեսիա կամ Ուռհա քաղաքի գրավումը Զանգի ամիրայի հրոսակներից (1144 թ.): «Պատմութեան» եւ «Ողբ Եդեսիոյ»-ի զուգադիր ընթերցումը երեւան է բերում այն հարազատությունը, որ առկա է երկու երկերի միջեւ: Ակնհայտ է, որ Շնորհալին,

---

[1] Ստացվել է՝ 25.08.2023, գրախոսվել է՝ 11.09.2023: էլ. հասցե՝* l.yu.vardanyan@gmail.ru:

[2] Այս մասին տե՛ս Կ. Մաթեւոսյան, *Անի (Եկեղեցական կյանքը եւ ձեռագրական ժառանգությունը), Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 1997, էջ 19:*

[3] Տե՛ս Արիստակես Լաստիվերցի, *ՄՀ, հտ. ԺԶ., Երեւան, 2012, գլ. ԻԵ., էջ 625–629:*

որը, դեռ իր առաջին գեղարվեստական քերթվածից՝ «Վիպասանութիւն»-ից սկսած, յուրացրել էր հայ պատմագրության ավանդները[4], հատկապես Արիստակես Լաստիվերցուց քաղած պատկերներով է նկարագրում Անին, ավելին՝ իր ողջ երկն ասես պատմիչի երկի՝ չափածոյի վերածած արձակ շարադրանքն է։

Հոդվածի նպատակն Անի քաղաքի պատկերման համեմատական վերլուծությունն է ժողովրդի ճակատագրով մտահոգ երկու գեղագետների գրվածքներում։ Ուստի հարցը դիտարկել ենք երկու հարթության մեջ՝ «Անին՝ ըստ Արիստակես Լաստիվերցու «Պատմութեան»» եւ «Անին՝ ըստ Ներսես Շնորհալու «Ողբ Եդեսիոյ» երկի»։

ԱՆԻՆ՝ ԸՍՏ ԱՐԻՍՏԱԿԵՍ ԼԱՍՏԻՎԵՐՑՈՒ «ՊԱՏՄՈՒԹԵԱՆ»

Անին դեռեւս Ե. դարից հայ պատմագրության մեջ հիշատակվել է անառիկ ամրոցների շարքում։ Այսպես՝ Եղիշեն իր երկում Անին դասում է Գառնի եւ Արտագերս անմատչելի ամրոցների թվին[5], Ղազար Փարպեցին նույնպես «Հայոց պատմության» Գ. դրվագում Անին հիշատակում է որպես ամուր մի բերդ[6]։ Այնպես, որ «ամուր» մակդիրը վերածվում է Անիի կայուն բնորոշչի եւ հանդիպում գրեթե բոլոր պատմիչների գործերում։ Հետագայում, երբ Անին հայոց մայրաքաղաք էր, այն նաեւ խորհրդանշում էր պետականության եւ երկրի հավաքական հզորության գաղափարը, եւ Անին նվաճելը համարժեք էր ողջ Հայոց աշխարհը նվաճելուն կամ նախորդում էր դրան։ Այսպես՝ Թովմա Արծրունու եւ Անանուն պատմիչի երկի հավելվածում բյուզանդացիների մասին ասված է. «Եւ նրանք տիրեցին Հայոց արեւելյան կողմին, Վան մեծ ավանին, Վասպուրական երկրին, թագավորանիստ Անի քաղաքին եւ Հայոց աշխարհին»[7]։

Անիի՝ Արիստակես Լաստիվերցու ընկալումն առավելապես հասարակական-քաղաքական է։ Լաստիվերցուն նախորդած Ստեփանոս Տարոնեցի Ասողիկն (ԺԱ. դար) Անին տեսնում է իր մշակութային դերի մեջ։

---

[4] *Տե՛ս* Ներսէս Շնորհալի, *Վիպասանութիւն, Պ. Խաչատրյանի առաջաբանը, Երեւան, 1981, էջ 19։*

[5] Եղիշէ, *Վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին / Մատենագիրք Հայոց (այսուհետ՝ ՄՀ), հտ. Ա., Անթիլիաս-Լիբանան, 2003, էջ 599։*

[6] *Մատենագիրք Հայոց, հտ. Բ., Անթիլիաս-Լիբանան, 2003, էջ 2315։*

[7] Թովմա Արծրունի եւ Անանուն, *Պատմություն Արծրունյաց տան, Հավելված, Երեւան, 1999, էջ 276։*

«Պատմութիւն տիեզերականի» ընթերցողին հեղինակը ներկայացնում է Սմբատ արքայի ձեռամբ Անիի կրկնակի պարիսպների կառուցման պատմությունը։ Պատմիչները բարձր են գնահատել եւ գովեստով են խոսել Հայոց իշխանների եւ թագավորների եկեղեցաշէն գործունեության մասին, ուստի Ստեփանոս Տարոնեցու նկարագրություններում Անին առանձնանում է իր նորակառույց եկեղեցիներով։ Պատմիչը հայտնում է, թե ինչպես է Հայոց արքա Սմբատ Բագրատունու պատվերով Տրդատ ճարտարապետը Սուրբ Գրիգոր եկեղեցու հիմքը գցում[8], իսկ Գագիկ Ա.-ի իշխանության տարիները նշանավորվում են նրա եւ Հայոց Տիկնոջ՝ Կատրամիդեի եկեղեցաշէն գործունեությամբ, հատկապես Սբ. Կաթողիկե եկեղեցու կառուցմամբ։ Այդ նկարագրություններում, որոնք, անշուշտ, միջնադարյան աշխարհընկալման դրսեւորումներ են, լավագույնս արտացոլված են եկեղեցու՝ երկնքի խորհրդանիշ լինելը երկրի վրա[9]։

Ավելի ուշ՝ Ստեփանոս Տարոնեցուն հաջորդած մատենագիրների երկերում Անին հենց սկզբից ներկայանում է որպես վաճառքի հանված հրաշալիք. այս մասին վկայում են Արիստակես Լաստիվերցու «Պատմութիւն»-ը, Հովհաննես Կոզեռնի տեսիլը[10], Մատթեոս Ուռհայեցու «Ժամանակագրությունը»։ Այս առումով Անիի, թերեւս, ամենից հետաքրքիր եւ միաժամանակ խնդրադիր նկարագիրը տվել է Արիստակես Լաստիվերցին, քանի որ նրան վիճակված էր հայոց մայրաքաղաքի կորստյան առաջին արձանագրողը լինել, ընդ որում՝ դա անել երկու անգամ՝ նախ նկարագրել, թե ինչպես են բյուզանդացիները խաբեությամբ տիրանում Հայոց մայրաքաղաքին, ապա շարադրել, թե ինչպես է Անի քաղաքը նվաճում Արփ-Արսլանը։

Արիստակես Լաստիվերցին հուզառատ եւ իր նկարագրածը խորապես վերապրող հեղինակ է։ Նա չափազանց կենդանի եւ սրտահույզ է պատկերել Հայոց աշխարհի մյուս քաղաքների եւ նրանց մերձակա շենների մարդկանց տառապանքները։ Այդպիսին են Կարս քաղաքի կոտորածի նկարագրությունը, երբ պատմիչի բնորոշմամբ «անօրենների զորքը» (իմա՛ թուրքերը) նրանց հանկարծակիի է բերում տերունական տոների

---

[8] Ստեփանոս Տարաւնեցի Ասողիկ, *Պատմութիւն տիեզերական, Մշ, հտ. ԺԵ., գիրք Բ., Անթիլիաս-Լիբանան, 2010, էջ 760։*

[9] *Անդ, էջ 807–809։*

[10] *«Պատմութիւն նշանաց, որ եղեն ի գուշակս առաջիկայ աւուրցն, որ կատարեցաւ, ասացեալ սուրբ վարդապետին Յոհաննիսի Կոզռան՝ հայոց վարդապետի», Մշ, հտ. ԺԶ., Երեւան, 2012, էջ 79–82։*

ժամանակ, Մանանաղի կոչվող բնակավայրի, հետո նաեւ Մելիտենեի կամ Արծնի կործանման տեսարանների պատկերումները։

Այլ է, սակայն, Անիի ընկալումը, որը նրա երկում ամենից շատ է երեւում իր քաղաքական դերակատարմամբ, քանի որ այն միաժամանակ պետականության նշանակն է, եւ ամեն ինչ կախված է նրա այդ դերի փոխակերպումներից։ «Պատմութեան» հենց սկզբից մենք ականատես ենք լինում քաղաքի վաճառքի իրողությանը՝ իմանում Հովհաննես-Սմբատի կտականամակի մասին, որով նա Հայոց մայրաքաղաքն իր մահից հետո հանձնում էր Բյուզանդիային։ Անիի քաղաքական նշանակության բացառիկությունը երեւում է «Պատմութեան» նախավերջին՝ ԻԴ. գլխում («Վասն տիեզերահռչակ քաղաքին Անւոյ խողխողմանն սրով»*), որտեղ պատմիչը սառնասրտորեն արձանագրում է բյուզանդացիների պարտությունը եւ քաղաքը Թուրքերին զիջելը։*

Թերեւս միայն Անիին տրված «տիեզերահռչակ» *բնորոշումն է, որ, քաղաքի երբեմնի փառքը ցույց տալով հանդերձ, բացահայտում այն ափսոսանքի զգացումը, որ կարող է առաջացնել բարեշնորհ մայրաքաղաքի կործանումը։ Հետո պատմիչը կրկին անցում է կատարում դեպքերին տրվող իր սովորական մեկնաբանությանը՝ մեղքի եւ հատուցման գաղափարին, որն ընդհանրական է քրիստոնյա, մեծ մասամբ հոգեւորական պատմիչների համար. ընթերցողի առջեւ հառնում է մեղքերով լի եւ այդ մեղքերի համար պատիժ կրող քաղաքի պատկերը։*

Հոգեւորական պատմիչը «մեղքերով կատարելության սահմանին հասած» քաղաքի այս վիճակը բացատրում է Աստծու սահմանած օրենքները չպահելու հանգամանքով, սուր քննադատության է ենթարկում քաղաքաբնակների նիստուկացը եւ Թուրք Ալփ-Արսլանի ձեռքով իրականացված քաղաքի գրավումը դիտարկում որպես Աստծու անխուսափելի պատիժ։։ Նրա նկարագրություններն ու վերաբերմունքի՝ իրեն ոչ բնորոշ սառնությունը կարող են տպավորություն ստեղծել, թե Անիի մեղքի բաժինը պատմիչը փոքր-ինչ չափազանցնում է։ Բայց այդ վերաբերմունքը մեկ անգամ եւս ընդգծում է Անիի քաղաքական առավել կարեւոր դերակատարումը, հետեւաբար ավելի մեծ պարտավորությունները, իսկ դրանց չկատարման պատճառը, կարծում ենք, առավել խորքային էր։ Միաժամանակ այն նաեւ արտացոլում է պատմիչի դառնությունն ուղղված Բյուզանդական կայսրությանը։ Այդ սառը դատողական մեղադրանքների պատճառն Անիի նկատմամբ ավելի վաղ կատարված դավադ-

րությունն էր, իր բնիկ տերերից՝ հայերից քաղաքը բյուզանդական խարդավանքներով խլելը (տե՛ս գլուխ Ժ.)։ Չէ՞ որ բյուզանդացիներին արդեն հաջողվել էր գահընկեց անել Հայոց արքա Գագիկ Բ.-ին եւ հեռացնել նրան հայոց մայրաքաղաքից՝ վերջ դնելով Անիի Բագրատունյաց թագավորությանը։ «Արդ, ի չորեքհարիւր իննսուն եւ չորս թուականին առաւ Անի, ո՛չ պատերազմի աւրինիւ, այլ պատիր բանիւ....» (561),– նշում է պատմիչը դառնությամբ։ Ուստի երկի նախավերջին գլուխը, որում սելջուկ-թուրքերը նվաճում են Անին, պարզ արձանագրումն է այն հետեւանքի, որ պիտի հաջորդեր քաղաքը բյուզանդացիներին հանձնելուն։

Հետագայում նրան հաջորդած հաջորդած Մատթեոս Ուռհայեցին դեպքերը վերլուծում է ոչ թե Լաստիվերցուն բնորոշ սթափությամբ, այլ փորձում է պատճառը հիմնավորել ողջ մարդկությանը պատուհասած չարիքով, որի գործիքն է համարում Հայկական լեռնաշխարհ ներխուժած թուրքական ցեղերին։ Հետեւաբար Անիի առումը նույնպես սատանայի գործ է, եւ սատանային բնորոշող մակդիրներով եւ փոխաբերություններով է հնարավոր քաղաքին պատուհասած մեծ աղետի արձանագրումը. «Յայսմ ամի յարուցեալ սուլտանն մեծաւ յաղթութեամբ եւ խաղաց չար վիշապն *Պարսից եւ գայր մտանէր յաշխարհն Հայոց եւ զաստուածասաստ բարկութիւն հեղոյր ի վերայ տանն արեւելից եւ արբուցանէր զմաղձն դառնութեան իւրոյ ամենայն ազգին Հայոց. եւ սփռեցաւ բոց բորբոքեալ մահու առ հասարակ հաւատացելոց Քրիստոսի, եւ լցաւ ամենայն տունն Հայոց արեամբ, սրով եւ գերութեամբ։ Եւ յարուցեալ գայր որպէս* զամպս սեւացեալս *եւ իջեալ ի վերայ թագաւորաբնակ քաղաքին Անւոյ եւ պատեաց առհասարակ շուրջանակաւ՝ նման* չար վիշապի» *(ընդգծումները մերն են.– Լ. Վ.)*[11]։

ԱՆԻՆ՝ ԸՍՏ ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼՈՒ ՁԱՓԱԾՈ ԵՐԿԻ

«Ողբ Եդեսիոյ» քերթվածում առաջին անգամ հայ իրականության մեջ Բագրատունյաց մայրաքաղաքը պատկերված է չափաբերված շարադրանքով։ Դեռ 1121 թ. իր առաջին երկը՝ «Վիպասանութիւն»-ը շարադրելիս Ներսես Շնորհալին նախընտրում է միահանգ բանաստեղծությունը։ Ներսես Շնորհալին իր պոեմը բնութագրել է մի երկար ենթավերնագրով՝ «Բան բարառնական, տաղիւ չափեալ հոմերական, խօսեալ

[11] Մատթէոս Ուռհայեցի, *Ժամանակագրութիւն, Երեւան, 1991, էջ 158։*

բանիւ ողբերգական, վասն Եդեսիայ մեծի առման ի թուականի հինգհարիւրի եւ իններսուն ընդ երեքի, քսան եւ երեք դեկտեմբերի. երրորդ ժամու, յաւր շաբաթի»[12]: Խոսքն առավել գրավիչ դարձնելու նպատակով նա մինչ այդ գործածած միահանգից անցում է կատարում բազմահանգին («Բան հաւատոյ», «Ողբ Եդեսիոյ»), իսկ «հոմերական չափ» արտահայտությամբ ընդգծում է իր երկի վիպականությունը[13]:

Հիմնականում պահպանելով պատմիչներից ավանդված պատկերային համակարգը՝ Շնորհալին, հարկավ գեղագիտորեն ընդգծել է այն չափածոյի մեջ՝ այսպես ասած, «ազատվելով» պատմագրական տեսակի կաշկանդումներից: Նրա՝ ոչ միայն «Ողբ Եդեսիոյ», այլեւ ավելի վաղ գրված «Վիպասանութիւն» երկում նկատելի է լավ յուրացրած հայ պատմագրության տաղաչափական փոխակերպումը, չափածոյով բովանդակային վերարտադրությունը, որն, անշուշտ, գրական զարգացման վկայություն է, նոր արտահայտչաձեւի որոնում եւ իրացում՝ պայմանավորված գերլարված զգացմունքով եւ խոսքն իր ընթերցողի համար առավել ազդեցիկ դարձնելու մտադրությամբ: Դրա ապացույցը ոչ միայն բովանդակության փոխադրումն է, այլ նաեւ ձեւի՝ տվյալ դեպքում դիմառնության կիրառումը, որը կրկին գալիս էր պատմագրությունից (տե՛ս Մովսես Խորենացու՝ Երվանդաշատ քաղաքի նկարագրությունը, կամ Արիստակես Լաստիվերցու դիմումը Սմբատի լեռանը): Ընդ որում՝ պատմագրությունից են փոխառված նաեւ աստվածաշնչյան միեւնույն պատկերները, վկայակոչումներն ու հղումները (օր.՝ «լաց ընդ լացողս», «անցին ըստ երազի որպէս ծաղիկ ամարայնի»): Նշենք, որ հետագայում հրավիրելու այս ձեւը, երբ ոգեկոչվում է անցյալը եւ որպես կոչունքի հիմնավորում ծառայում են անցյալի պատկերներն ու հիշողությունները, գտնում ենք նաեւ Խրիմյան Հայրիկի «Հրաւիրակ Արարատեան» պոեմում (1850 թ.), որն ըստ ամենայնի կրում է Ներսես Շնորհալու «Ողբ Եդեսիոյ»-ի ազդեցությունը: Այս առումով տեղին է հիշել, գրականագետ Ա. Մադոյեանի՝ սույն երկին տված այն գնահատականը, ըստ որի «պատմաքաղաքական ողբի լավագույն արտահայտությունը Ներսես Շնորհա-

---

[12] Ներսէս Շնորհալի, *Ողբ Եդեսիոյ*, ՄՀ, հտ. ԻԱ., Երեւան, 2018, էջ 158:

[13] *«Հոմերական չափ» արտահայտության վերաբերյալ Հ. Որսկանյանը հետեւյալ մեկնությունն է տալիս. «Նկատի ունենալով, որ Շնորհալին «ըստ Հոմերի» է շարադրել նաեւ իր «Վիպասանությունը», կարելի է ենթադրել, որ բանաստեղծը հոմերական է անվանում այն չափածո խոսքը, ուր գերակշռում է վիպական, պատմողական տարրը»:* Հ. Որսկանյան, *Ներսես Շնորհալու պոեմները*, Երեւան, 2006, էջ 45:

լու «Ողբ Եդեսիոյ» քերթվածն է, եւ հետագա բոլոր հեղինակների համար սա եղել է ուղեցույց, ընդօրինակության առարկա, դպրոց»[14]։

Շնորհալու երկում դիմառնության եղանակի կիրառումն ունի իմաստի աստիճանական սաստկացում, եւ այդ սաստկացման գագաթն Անին է. այրի եւ որդեկորույս կնոջ կերպարանք առած Եդեսիան նախ դիմում է բոլոր եկեղեցիներին, քաղաքներին եւ գյուղերին, ազգերին եւ ցեղերին՝ ընդհանրապես Քրիստոսի բոլոր հավատացյալներին, իսկ հետո անվանապես թվարկում է՝ Երուսաղեմ, Հռոմ, Կոստանդնուպոլիս, Ալեքսանդրիա, Անտիոք, այնուհետեւ՝ դառնում է Մեծ Հայքի բնակավայրերին եւ Հայաստանյայց եկեղեցուն՝ իր Վաղարշապատ քաղաքով՝ վկայակոչելով երբեմնի փառավոր անցյալը։ Նրան՝ որպես ուսուցիչ պետք է «հմուտ լալեաց բանի» մեկը, որ նաեւ քաջ տեղյակ է սրտի այրումից։ Իմաստի սաստկացումն Անիի հիշատակումն է, երբ հեղինակը (այս դեպքում արդեն ոչ Եդեսիան) Եդեսիա քաղաքի ողբերգության չափը ցույց տալու համար կշեռքի մյուս նժարին դնում է բագրատունյաց մայրաքաղաքի անկումը։ Այս փաստն Անիի մեծության ընկալման մի լրացուցիչ արտահայտություն է։ Ողբացողին հաճախ տանջող հարցը, թե ինչու ինքը կորցրեց երբեմնի բարեկարգությունն ու հասավ այդ վիճակին, Շնորհալին հմտորեն հանձնարարում է այրի կնոջ պես սգացող քաղաքներին, որոնց մեջ «արեւելեան քաղաքն Անին» ամենից լավ կարող է ապրումակցել Եդեսիային, ձայնակցել ողբին եւ սփոփել նրա բոլոր տարակույսները[15]։ Եթե հիշենք Անիի պատմական նշանակությունն ու նրան տրված լաստիվերցիական «տիեզերահռչակ» բնորոշումը, գուցե թե այլեւս հարց չծագի, թե ինչու։ Սակայն այս քաղաքները նման էին նաեւ ճակատագրով։ Եդեսիան, որ միջնադարի նշանավոր քաղաքներից էր, նույնպես դավադրության զոհ է դառնում, ինչպես Անին։ Նրա՝ Թորոս անունով հայ կառավարիչն սպանվում է իր իսկ հյուրընկալած խաչակիրների ձեռքով, եւ քաղաքին տեր դարձած ֆրանկները, հետզհետե թուլանալով եւ զեխության մեջ խրվելով, մեկ ամիս պաշարված մնալուց եւ դիմադրելուց հետո, քաղաքը հանձնում են Հալեպի Զանգի ամիրային[16]։

---

[14] Ա. Մադոյեան, *Միջնադարյան հայկական պոեմը, Երեւան, 1985, էջ 221։*

[15] *Ինչպես նկատում է Հ. Բարթիկյանը. «Շնորհալին Եդեսիայի անկումը նույնպիսի դժբախտություն է համարում, ինչպիսին էր Անիի անկումը, եւ Անիին է հրավիրում սգակից լինելու եւ իր հետ ողբալու Եդեսիայի գլխին եկած աղետը»։* Հ. Բարթիկյան, *Մատթեոս Ուռհայեցին, նրա ժամանակն ու «Ժամանակագրությունը»* / Մատթեոս Ուռհայեցի, *Ժամանակագրություն, Երեւան, 1973, էջ V։*

[16] *Այս մասին մանրամասն տե՛ս* Մ. Աբեղյան, *Երկեր, Դ., Երեւան, 1970, էջ 128։*

Եթե վերանանք ողբի տեսակին հատուկ իմաստաբանությունից եւ սոսկ ակնդիր լինենք «Ողբ Եդեսիոյ» պոեմում Անիի նկարագրությանը, ապա կտեսնենք, որ այն ընթերցողի առջեւ հառնում է որպես միջնադարյան առինքնող գեղեցկությամբ մի քաղաք, որի բնորոշիչը վայելչական հարսի կերպավորումն է՝ մերձավորներին ցանկալի, հեռավորներին փափագելի[17]: *Այս համեմատության մեջ, ինչ խոսք, բնականորեն միաձուլված են հոգեւորական բանաստեղծի աստվածաբանական եւ հայրենասիրական գաղափարները, հոգու «հարսնության» թեման[18] եւ Անիի ոգեղենության ընկալումը:*

Ինչպես արդեն նշել ենք, Շնորհալին չափածոյի է վերածում պատմագրության ավանդածը, եւ այն նույն պատկերները, ինչ հանդիպում են պատմիչների երկերում, տեսնում ենք նաեւ այս պոեմում: Սակայն հատկապես Անիի նկարագրության մեջ արտացոլված է Ներսես Շնորհալու՝ աստվածային լույսի *ընկալումը[19] եւ այդ ամենը՝ մարմնավորված ամենապարզ պատմական փաստերով: Այսպես՝ Շնորհալին հայտնում է, որ Անին կառուցված է Շարայի նահանգում Բագրատունի թագավորների ձեռքով, որոնք սերում են Իսրայելի ցեղից՝ աստվածահոր մարգարե մեծն Դավթի ազգից: Այստեղ մի մեջբերում կատարենք Մեսրոպ վրդ. Պարսամյանի «Լինել Աստուած» աշխատությունից. «Պետք է հիշել, որ տակավին Ս. Գրքում, անկախ որեւէ ազդեցությունից, Աստված ընկալվում է իբրեւ լույս: Ս. Գիրքն առատ է լույս Աստծուն վերաբերող արտահայտություններով: Դավիթ մարգարեն, ում տեւապես հղում է Շնորհալին, բացականչում է. «Տէ՛ր, լոյսի եւ կյանք իմ» (Սղմ. ԻԶ.1) եւ հորդորում է համայն մարդկությանը. «Մատի՛ք առ Տէր եւ առէ՛ք զլոյս» (Սղմ. ԼԳ. 6):*

Ներսես Շնորհալին հատուկ նշանակություն է տալիս «Անի» տեղանվանը՝ այն կոչելով «գեղեցկանուն զարմանալի», իսկ եռատառ լինելը կապում Լույս Երրորդության խորհրդի հետ: Ընդգծում է նաեւ, որ Անին միշտ երկրպագել է Սուրբ Երրորդությանը՝ *դրանով ցույց տալով քաղաքի ջերմեռանդ բարեպաշտությունը[20]: Այս բնորոշումից երեւում է, թե որ-*

---

[17] *Տե՛ս* Ներսէս Շնորհալի, *Մշ, հտ. ԻԱ., Երեւան, 2018, էջ 164:*

[18] Մ. Պարսամեան, *Լինել Աստուած, Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 2015, էջ 148:*

[19] *Տե՛ս անդ, էջ 78:*

[20] *Կ. Մաթեւոսյանը Ներսես Շնորհալու՝ Անիին տրված այս բնորոշումը մեկնաբանում է քաղաքի համահայկական հոգեւոր եւ եկեղեցական կենտրոն լինելու հանգամանքով՝ հիշատակելով այն ավանդությունը, ըստ որի Գրիգոր Լուսավորիչն առաջիններից մեկն Անիում է եկեղեցի հիմնել, եւ իր բազում սրբավայրերով հայտնի քաղաքն ամենից շատ*

քան բարձր է գնահատում բանաստեղծ կաթողիկոսն Անին[21]*, եւ որ Բագրատունյաց մայրաքաղաքը նրա լուսերգության տիրույթում է։*

Հաջորդող պատկերում Անին, որը համեմատվում է աստվածաշնչյան Սաղիմ բնակավայրի հետ, գերի է։ Այրի կնոջ կերպավորումով Եդեսիան Անի քաղաքին դիմում է ո՛վ անձկալի *կոչականով եւ խնդրում տրտմակից լինել իրեն, քանզի միեւնույն դժբախտության մեջ է այժմ եւ ինքը։ Ցավակից լինելու, միասին ողբալու հանգամանքը միայն կարող է այրվող սրտին մխիթարություն բերել։ Սա այն պահանջն է, որ մշտապես իր ընթերցողից ուներ Արիստակես Լաստիվերցին, իսկ Ներսես Շնորհալին այն իրականացնում է երկու գերված քաղաքների պատկերով։ Անիի հետագա նկարագրությունները երբեմն Արիստակես Լաստիվերցու «Պատմութեան» համապատասխան դրվագներն են արթնացնում ընթերցողի հիշողության մեջ, մասնավորապես նրա երկի՝ Հայոց աշխարհին վերաբերող եւ հայոց բարօր ժամանակների մասին պատմող մասերը։ Զուգադրենք այդ երկու հատված.*

Արիստակես Լաստիվերցի	*Ներսես Շնորհալի*
Աշխարհ, որ երբեմն ժամանակաւ իբրեւ զդրախտ տնկախիտ *առաջի իւր, կանաչագեղ, տերեւալից, պտղաբեր, գեղեցկաշուք եւ երջանիկ անցաւորացն ցուցանիւր, քանզի իշխանք նստէին յիշխանական գահու զուարթահայեաց դիմաւք, եւ զաւրացն՝ զգարնանաբեր ծաղկանոցաց բերեալ զնմանութիւն՝ վառ ի վառ գունովք առաջի կացեալ, ուրախական երգոց եւ բանից միայն լինէին հանդէսք.... Իսկ թագաւորն յառաւաւտինսն յորժամ ի քաղաքէն ելանէր զաւրէն փեսայի, որ ելանէ յառագաստէ իւրմէ, կամ որպէս տուընջեան արուսեակն... ՄՀ, հտ. ԺԶ., էջ 559։*	*Յորում էիր ժամանակի բերկրեալ ուրախ եւ ցնծալի,* *Որպէս* այգի *ողկուզալի կամ ձիթենի պտղով ի լի։* *Մանկունք քո զուարթալի նման նորոգ բուրաստանի,* *Դստերք քո պաճուճալի յերգ 'ւ ի քնար միշտ ի խաղի,* *Իսկ թագաւոր քո պանծալի նստեալ յաթոռ թագն ի գլխի, եւ զաւրականքն աստի 'ւ անտի կալով ի սպաս իւր հրամանի։ ՄՀ, հտ. ԻԱ., գք. Ա., էջ 164–165։* *(ընդգծումները մերն են.– Լ. Վ.)*

Ինչպես տեսնում ենք՝ Շնորհալու պատկերումներում Անին եւս այգու փոխաբերությամբ է հանդես գալիս, իսկ Անիի անկումը բնորոշվում է

Լուսավորչի անունով է վանքեր ունեցել։ Տե՛ս Կ. Մաթեւոսյան, *Անին եւ անեցիները, Երեւան, 2021, էջ 13։*

[21] *Ըստ որոշ ուսումնասիրողների՝ այստեղ կարելի է տեսնել Ներսես Շնորհալու՝ աստվածային լույսի ընկալումը։*

այդ այգու, ասել է թե՝ դրախտի արմատապես խլվելու գաղափարով։ Այս պատկերը, թերեւս, համեմատելի է Լաստիվերցու «տնկախիտ դրախտի» հետ, եւ պատմագրության հիմնարար գաղափարներին համախոհ Ներսես Շնորհալին նույնական բնորոշումներով է նկարագրում Անին։ Ընդհանրապես, «այգի»-ն՝ իր «պարտեզ», «բուրաստան», «եդեմ», «Ադեն» եւ այլ հոմանիշներով եւ դրանց նկարագրությամբ, միջնադարյան գեղագետների երկերում դրախտը վերագտնելու միջոց էր[22] եւ «Ողբ Եդեսիոյ» երկում թերեւս ամենից հաճախ գործածվող փոխաբերությունն է։ Եւ մի հանգամանք եւս այգու շնորհալիական ընկալումը նույնացնում է Լաստիվերցու ընկալմանը։ Իր «Պատմութեան» մեջ Լաստիվեցին տարբերում է երկրի բնիկ տերերին եւ Աստծուց նրանց տրված բնաշխարհը՝ հայոց երկիրը։ Նույնն իր երկում շեշտում է նաեւ Շնորհալին՝ հանդես գալով Եդեսիայի բնակչի անունից.

Քանզի այգւոյն զիս պահապան եդ՝ որ ստեղծ զիս ի սկզբան,
Եւ աւանդեաց ինձ պատուիրան, ուստի եւ կեանք անմահական

(ՄՀ, ԻԱ., գիրք Ա., էջ 170)։

Այսպիսով՝ Անի պատկերը հայ պատմագիրների երկերից, մասնավորապես՝ Լաստիվերցուց անցնելով Ներսես Շնորհալու «Ողբ Եդեսիոյ» պոեմին՝ գաղափարական հարազատությամբ եւ պատկերային բազում նույնություններով հանդերձ՝ հանգավորման շնորհիվ դառնում է առավել ազդեցիկ։ Ներսես Շնորհալու գրչի տակ այն բացահայտվում է նաեւ աստվածային լույսի իր շնորհով, որը մատնանշում է Անի մայրաքաղաքի ամենից էական, հետեւաբար անկորնչելի հատկանիշը, որը միշտ ենթադրում է անարդարացիորեն կորցրածը մի օր վերադարձնելու անմար հույսը։ Այդ պատճառով Ներսես Շնորհալին եւս շեշտում է իրեն նախորդած մատենագիրներից քաղած հայրենի երկրի՝ Աստծուց ի վերուստ շնորհված «տնկախիտ դրախտի», իսկ իր բառերով «այգու» եւ «բուրաստանի» տերը լինելու գաղափարը։

---

[22] *Այս դեպքում ստիպված ենք չհամաձայնել գրականագետ Պ. Խաչատրյանի հետ, երբ նա մի սովորական բնապատկեր է համարում. «Ջուր կենդանի յինէն բղխէր, զուարթածաղիկ բոյս յօրինէր, // Գետոց նման վտակ հոսէր, զբուրաստանս արբուցանէր...» (էջ 168) հատվածը։ Այստեղ նույնպես գործ ունենք դրախտի փոփոխակի՝ բուրաստանի, այսինքն՝ Սուրբ Գրքից բխող պատկերային համակարգի եւ աշխարհը՝ որպես Աստծու ստեղծագործություն դիտելու միջնադարյան ընկալման հետ։ Տե՛ս Պ. ԽԱՉԱՏՐԵԱՆ, Ներսէս Շնորհալին եւ նրա «Ողբ Եդեսիոյ»-ն, ՄՀ, հտ. ԻԱ., գիրք Ա., նշ. աշխ., էջ 148։*

ՀԻՄՆԱԲԱՌԵՐ

Անի, Արիստակես Լաստիվերցի, Ներսես Շնորհալի, Եդեսիա, ողբ, հայոց մայրաքաղաք, Գրիգոր Լուսավորիչ, պատմագրություն, Բյուզանդական կայսրություն, սելջուկ-թուրքեր, Զանգի ամիրա, դրախտ, այգի:

РЕЗЮМЕ

В статье рассматриваются определения, данные городу Ани в труде историка XI века Аристакеса Ластиверци и в поэме «Плач Эдессы» армянского католикоса, поэта и композитора Нерсеса Шнорали, жившего и творившего в XII веке.

SUMMARY

The article examines the definitions given to the city of Ani in the work of the 11th century historian Aristakes Lastivertsi and in the poem “Lamentation on Edessa” by the Armenian Catholicos, poet and composer Nerses the Graceful (12th century).